— Վաճառականի գործը ի՞նչ կը լինի. բամբակի բեռնէր ունէի Բաղէշ ճանապարհ դնելու. եկայ, յանձնեցի քարաւանին: — Դուք Բաղէշ կը հանդիպէ՞ք, պարոն բժշկապետ:

— Անպատճառ:

— Իսկ Մո՞ւշ:

— Նոյնպէս:

— Ուրեմն, եթէ չէք մերժի իմ փոքրիկ ծառայութիւնը, ես կը տամ ձեզ երկու յանձնարարական նամակներ, մէկը Բաղեղ, միւսը Մուշ, այդ քաղաքներում ես երկու լաւ բարեկամներ ունեմ, նրանք կարող են պիտանի լինել ձեզ: Դուք, կարծեմ, հետաքրքրւո՞ւմ էք հնութիւններով, պարոն բժշկապետ:

— Այո՛ , շնորհակալ եմ, խօջայ Թորոս, — ասաց Ասլանը, ընդունելով նամակները եւ սեղմելով մուսուլցու ձեռքը: — Մնաք բարեաւ, խօջայ Թորոս:

— Յաջողութիւ՛ն եւ բարի ճանապա՛րհ, պարոն բժշկապետ, — ասաց նա եւ պինդ սեղմեց Ասլանի ձեռքը:

Մենք բաժանուեցանք: Ընթերցող, դու խօ չես մոռացել, թէ ով էր այդ մուսուլցին իր արաբական ապարօշով եւ իր շիլ վառվռուն աչքերով...

Քարաւա՛ն, — դա արեւելքի շարժական կեանքն է. քարաւան տեսնելով, կարելի է արեւելքի կենդանի, գործունեայ եւ եռանդոտ մասը տեսած լինել:

Նեղ ու անձուկ ճանապարհի երկարութեամբ բռնել էր նա մի քանի փարսախ տարածութիւն: Մինը միւսի ետեւից շարուած էին բեռնակիր գրաստները: Այդ երկար, կենդանի շղթան, որի ծայրը չէր երեւում, դանդաղ կերպով շարժւում էր, առաջ էր ընթանում եւ, ճանապարհի խոտորնակի ուղղութեամբ, օձի նման պտոյտներ էր գործում, գալարւում էր եւ դարձեալ ուղիղ ընթացք էր ստանում, երբ ճանապարհը փոքր-ինչ հարթ էր եւ ուղղաձիգ: Բեռնակիր գրաստները բաղկացած էին ջորիներից: Նրանք ղաթարղաթար, այսինքն խումբ-խումբ, դասաւորուած էին միմեանց ետեւից: Իւրաքանչիւր խումբը բաղկացած էր տասն ջորիից, բոլորը միագոյն: Մի խումբը սպիտակներ էին, միւսը՝ սեւեր, երրորդը՝ մուգ մոխրագոյն եւ այլն: Բոլորից առաջ գնում էր սպիտակների խումբը: Իւրաքանչիւր խումբ կազմում էր մի միութիւն: Մէկ ջորին կապած էր միւսի համետի ետեւից երասանակի շղթայով: Ամէն մի խումբի հետ գնում էին երկու ծառաներ, որ եթէ բեռները ծռուելու լինեն, ուղղեն, կամ եթէ անասուններից մէկը սայթաքելու եւ ընկնելու լինի, կանգնեցնեն: Բոլոր ջորիների գլուխը, պարանոցը եւ գաւակը զարդարած էին գոյնզգոյն հուլունքներով, գոյնզգոյն խխունջներով, գոյնզգոյն փն-